

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վ. Ն. ԱՅՎԱԶՅԱՆ

Մարդու իրավունքների պաշտպանության հասկացությունը և բովանդակությունը:
Մարդու իրավունքների պաշտպանությունը եղել և մնում է քաղաքակիրթ մարդկության առաջնահերթ խնդիրներից մեկը՝ սկսած անտիկ ժամանակներից մինչև մեր օրերը: Մարդկության պարած ամեն մի հասարակական կացությամբ յուրահատուկ ձևով դերով և լուծվել է մարդու իրավունքների պաշտպանության խնդիրը: Այսպես, եթե մեր օրերում ստրկությունը կամ ճորտատիրությունը ինչպես բարոյականության, այնպես էլ իրավունքի տեսանկյունից համարվում է պարսավելի երևույթ, ապա Հին աշխարհի երկրներում, անգամ միջնադարում, դրանք իրախուսվել են որպես հասարակական արտադրանքի աճին նպաստող երևույթներ: Այդ առնչությամբ հիմնավոր է ֆրանսիացի լուսավորիչ Ժան Ժակ Ռուսսոյի այն միտքը, թե «ստրկության իրավունք» հասկացությունը ոչ միայն անօրինական է, այլև անմիտ. «ստրկ» և «իրավունք» բառերը փոխադարձաբար բացառում են միմյանց»¹:

Մարդու իրավունքների պաշտպանության խնդիրը մեր օրերում սերտորեն կապված, միահյուսված է այնպիսի ֆենոմենների հետ, ինչպիսիք են «ազատություն»-ը և «հավասարություն»-ը: «Ազատությունը իրավունք է տալիս անելու այն ամենը, ինչ թույլատրում են օրենքները, հասարակության առաջընթացին զուգընթաց ազատությունը դառնում է արդիականության կրողը, իսկ իրավահավասարությունը՝ մարդկության սրբազան օրենքը»², — գրում է Մոնտեսքեմ:

Մարդու իրավունքների պաշտպանության հիմնահարցը իր ամբողջական իրավական ձևակերպումն է ստացել դեռևս միջնադարում: Հանրահայտ են հրիտանական Միացյալ Թագավորության սահմանադրական ակտերի շարքից պատկանող «Ազատությունների Մեծ Խարտիան» (1215 թ.), «Իրավունքների մասին հանրագիրը» (1628 թ.), որոնք հռչակում էին բրիտանական պետության ժողովրդավարական բնույթը, նրա քաղաքացիների բնական և անօտարելի իրավունքներն ու ազատությունները:

Մարդու իրավունքների սահմանման և պաշտպանության հարցի հետագա զարգացումը կապված է եվրոպական երկրներում տեղի ունեցած հեղափոխությունների հետ, որոնց գաղափարական հիմքն էր մարդու բնական իրավունքների մասին ֆրանսիական լուսավորիչների (Վոլտեր, Մոնտեսքեմ, Ռուսսո, Դիդրո, Հոբսբախ) մշակած տեսությունները: Այդ տեսությունների դրույթները իրենց արտահայտությունը գտան Ֆրանսիայում, մասնավորապես 1789 թ. ընդունված «Մարդու և քաղաքացու իրավունքների մասին» հռչակագրում, համաձայն որի մարդիկ ծնվում և մնում են ազատ ու հավասար իրենց իրավունքներում: Հասարակական տարբերությունները կարող են հիմնվել միայն ընդհանուր բարօրության դատողության վրա (հոդ. 1): Հռչակագիրը ամեն մի պետության գլխավոր նպատակն էր համարում քաղաքացիների բնական և անօտարելի իրավունքների (ազատության, սեփականության, անվտանգության, բնության դիմադրության) ապահովումը (հոդ. 9)³:

Մարդու իրավունքների պաշտպանության կարևորությունը զնալով այնքան ակնհայտ էր դառնում, որ հասունանում էր այդ ինստիտուտի սահմանադրական կարգավոր-

¹: «Աֆորիզմներ», (կազմողներ՝ Պ. Պ. Պետրով, Յա. Վ. Բերլին), Երևան, 1989, էջ 80:

² Նույն տեղում, էջ 54, 55:

³ *Տե՛ս* Конституционное (государственное) право зарубежных стран в 4-х томах, (под ред. проф. Б. А. Страшуна). Том 1. М., 1993, էջ 67:

ման խնդիրը: Այդ խնդրի լուծմանը առաջինը ձեռնամուխ եղավ Ամերիկայի Միացյալ Նահանգները, որը 1791 թ. իր Սահմանադրության մեջ կատարեց առաջին տասը փոփոխությունները, որոնք հայտնի են «Մարդու իրավունքների հրովարտակը» անվանմամբ: Հրովարտակը կրաշխավորվում էր մարդու քաղաքացիական, քաղաքական և սոցիալ-մշակութային իրավունքները, մասնավորապես՝ խոսքի, մտնույի ազատության, խաղաղ հավաքներ անցկացնելու և վշտերի դարմանման խնդրով կառավարությանը դիմելու ժողովրդի իրավունքը, անձի ունեցվածքի, գույքի անձեռնմխելիության իրավունքը և այլն: Հրովարտակում տեղ էն գտել նաև անձի դատական պաշտպանության, պատժի անհատականացման և այլ սահմանադրական սկզբունքներ:

Հատկանշական է, որ ինչպես «Մարդու և քաղաքացու իրավունքների մասին» ֆրանսիական հուշակագրի դրույթները իրենց արտացոլումն ստացան Ֆրանսիայի 1791 թ. Սահմանադրության մեջ, այնպես էլ «Մարդու իրավունքների մասին» ամերիկյան հրովարտակը ընդգրկվեց ԱՄՆ-ի սահմանադրության մեջ և ձեռք բերեց համապարտադիր վարքագծի ուժ: Ապահովված լինելով բազմաթիվ և բազմապիսի իրավական և նյութական կրաշխիքներով, այդ հրովարտակի դրույթները ստացան իրենց անշեղ և գործնական կիրառությունը, որն էլ ամերիկյան ժողովրդավարությանը բերեց լայն ճանաչում: Կարծում ենք հարկ չկա հիմնավորելու, որ ազգային, կրոնական, կուսակցական և այլ հիմքերով ծագող հակասությունները այդ երկրում հասցված են նվազագույնի, որն ուսանելի պետք է լինի այլ պետությունների համար, որոնք փորձում են իրենց երկրներում սահմանել ժողովրդավարական ոեծիմ:

Ասկայն կյանքը ցույց է տալիս, որ ոչ բոլոր երկրներում և ոչ միշտ է հաջողվում այդ գործընթացի կազմակերպումը: Հարցը առավել չափով սրվեց 20-րդ դարի սկզբներին, երբ մարդկությունը ապրեց երկու համաշխարհային պատերազմների սարսափները: Այդ պատերազմների ավերիչ հետևանքները կարծես թե սթափեցրին ժողովուրդներին, որոնք Երկրորդ համաշխարհայինից հետո միջպետական բազմաթիվ հարաբերությունների հետ մեկտեղ փորձում են համատեղ ուժերով իրականացնել նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Մարդու իրավունքների միջազգային պաշտպանության բովանդակությունը: Մարդու իրավունքների պաշտպանության գործը միջպետական մակարդակով իրականացնելու նպատակով առաջին համաշխարհային պատերազմից հետո կազմակերպվեց Ազգերի Լիգան, որը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո վերակառուցվեց Միացյալ Ազգերի Կազմակերպության: ՄԱԿ-ի կանոնադրությամբ նրա առջև դրված խնդիրների շարքում առանձնահատուկ տեղ է հատկացված մարդու իրավունքների պաշտպանությանը: Մասնավորապես նշվում է, որ Միացյալ Ազգերի Կազմակերպությունը իր առջև նպատակ է դնում իրականացնել միջազգային համագործակցություն տնտեսական, սոցիալական, մշակութային, հումանիտար բնույթի խնդիրների լուծման, ինչպես նաև մարդու իրավունքների ու ազատությունների հարգման ուղղությամբ, անկախ ուսայի, լեզվի ու կրոնի տարբերության (հոդվ. 3):

Մարդու իրավունքների միջազգային պաշտպանությունը միջպետական համաձայնեցված միջոցների, գործողությունների համակցություն է, որն ուղղված է մարդու նվազագույն, տարրական ժողովրդավարական իրավունքների և ազատությունների իրականացմանը, իրավունքների և ազատությունների նկատմամբ ամեն տեսակ անօրինական բռնությունների արգելմանը: Այն իր արտահայտությունն է գտնում միջպետական համաձայնագրերի և մարդու իրավունքների մասին պետությունների մշակած այլ փաստաթղթերի մեջ:

Կնքված միջազգային փաստաթղթերին մասնակից պետությունները միաժամանակ պարտավորվում են իրենց ներքին օրենսդրությունը և քաղաքականությունը համապատասխանեցնել կնքված փաստաթղթերի նորմերին: Նրանք պատասխանատվություն են կրում պայմանագրային պարտավորությունների խախտման, այդ թվում մարդու իրավունքների անօրինական ոտնահարման համար:

Մարդու իրավունքների պաշտպանության խնդրին պետությունները ցուցաբերում են դիֆերենցիալ մոտեցում, այսինքն՝ տարբերում են մարդու և քաղաքացու իրավունքները: Մարդու իրավունքները նրա բնական իրավունքներն են, իսկ քաղաքացու իրավունքները՝ բնական իրավունքներին ավելացված քաղաքացիության հետ կապված իրավունքները: Բնականաբար քաղաքացու իրավունքների ծավալը ավելի մեծ է: Պետությունը, որի քաղաքացին է անձը, իրավաբանորեն համարվում է նրա հայրենիքը: Դրանից հետևում է, որ անձ-քաղաքացին ամենուրեք օգտվում է իր հայրենի պետության պաշտպանությունից՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Այլ է տվյալ պետության տարածքում ապրող օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակը: Այսպես, ապաքաղաքացիությունը այն վի-

նակն է, երբ անձը որևէ պետության քաղաքացի չէ, այսինքն՝ դուրս է մնացել կամ զորկվել է մեկ պետության քաղաքացիությունից և ձեռք չի բերել մեկ այլ պետության քաղաքացիություն: Այդպիսի իրավիճակում հայտնվեցին հայոց մեծ ցեղասպանությունից մի կերպ ազատված հայազգի քաղաքացիների զգալի մասը, որը կորցնելով Թուրքիայի քաղաքացիությունը՝ ձեռք չբերեց որևէ պետության քաղաքացիություն:

Ասլաքաղաքացիները քաղաքացիների համեմատ օժտված են սահմանափակ իրավասություններով, նրանք չեն օգտվում տվյալ պետության քաղաքացիների համար սահմանված քաղաքական իրավունքներից և ազատություններից: Վերջիններս չեն օգտվում նաև միջազգային համաձայնագրերով օտարերկրացիների համար սահմանվող իրավունքներից, ինչպես նաև չեն կարող օգտվել որևէ պետության դիվանագիտական պաշտպանությունից:

Ասլաքաղաքացիության իրավիճակից տարբերվում է երկքաղաքացիությունը, որը նույնպես պետությունների՝ քաղաքացիության մասին օրենսդրության կոդիֆիկացիայի արդյունք է: Վերջինս այնպիսի իրավիճակ է, երբ անձը միաժամանակ երկու և ավելի պետությունների քաղաքացի է: Երկքաղաքացու իրավիճակի բարդությունն այն է, որ նա հանդես է գալիս որպես երկու հայրենիք-պետության քաղաքացի և պարտավոր է իր քաղաքացիական պարտքը կատարել հայրենիքի հանդեպ, մասնավորապես՝ ծառայել նրա զինված ուժերի շարքերում: Դրությունը ավելի է բարդանում, երբ քաղաքացու հայրենիքները սլատերագմում են միմյանց դեմ: Երկքաղաքացին լինելով նրանցից մեկի զինված ուժերի շարքերում, ահամա հանդես է գալիս որպես մյուս հայրենիքի դավաճան՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով:

Բազմաքաղաքացիությունը ոչ նորմալ երևույթ է, և պետությունները պարտավոր են ՄԱԿ-ի համապատասխան մարմինների օգնությամբ վերացնել այդ ինստիտուտը:

Այլ բովանդակություն ունի օտարերկրացիների իրավական ռեժիմը: Օտարերկրացի է համարվում տվյալ պետության տարածքում գտնվող անձը, որը այլ պետության քաղաքացի է և չունի տվյալ պետության քաղաքացիություն: Օտարերկրացիների իրավական վիճակը սահմանվում է այն երկրի օրենսդրությամբ, որի տարածքում են գտնվում վերջիններս, ինչպես նաև՝ միջազգային համաձայնագրերով: Նրանց իրավունքները և սահմանափակ են՝ համեմատած տվյալ պետության քաղաքացիների:

Մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային փաստաթղթերը: Մարդու իրավունքների միջազգային պաշտպանության վերաբերյալ առաջին փաստաթուղթը «Մարդու իրավունքների մասին» հռչակագիրն է, որի հիման վրա այնուհետև մշակվեցին երկու կարևոր փաստաթղթեր՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ու «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրերը⁴: Դաշնագրերի հետ միասին ընդունվեց նաև քաղաքացիական և քաղաքական իրավունքների դաշնագրին կից արձանագրությունը, որոնք (այդ երեք փաստաթղթերը) ամբողջությամբ կազմում են մարդու իրավունքների մասին խարտիան, որը ստորագրած կամ միացած պետությունների համար ունի պարտադիր բնույթ:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված իրավունքները և ազատությունները միջազգային իրավունքի գիտության մեջ դասակարգվում են երեք խմբի: **Առաջին** խմբի մեջ մտնում են, այսպես կոչված, մարդու տարրական իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ ապրելու, ազատության և անձեռնմխելիության իրավունքները (հոդվ. 3), ստրկությունից զերծ մնալու (հոդվ. 4), խոշտանգումից կամ դաժան, անմարդկային, արժանապատվությունը նենսացնող վերաբերմունքից ու պատժից զերծ մնալու իրավունք (հոդվ. 5), օրենքի առաջ բոլորի հավասարության (հոդվ. 7), ինչպես նաև մի շարք այլ իրավունքներ, որոնք վերաբերում են արդարադատության իրականացման դատավարական երաշխիքներին, ընտանեկան կյանքին կամայական միջամտելուց, բնակարանի, ճամպագրության գաղտնիության, պատվի ու արժանապատվության նկատմամբ ոտնձգություններից պաշտպանվելուն (հոդվ. 8—12) և այլն:

Երկրորդ խումբը կազմում են մարդու քաղաքական իրավունքներն ու ազատությունները: Հռչակագրում ամրագրված են անձի իրավունքները՝ պահպանելու ճանաչելու իր իրավասությունները (հոդվ. 6), ազատորեն տեղից տեղ փոխադրվել և բնակության վայր ընտրել ցանկացած պետության սահմաններում (հոդվ. 13), ստանալու ապաստան (հոդվ. 14), քաղաքացիություն (հոդվ. 15) և այլն:

⁴ Առաջինը ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 21-րդ նստաշրջանում 1946 թ. դեկտեմբերի 16-ին և ուժի մեջ մտել 1976 թ. հունվարի 3-ին, երկրորդը՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 21-րդ նստաշրջանում 1966 թ. դեկտեմբերի 16-ին և ուժի մեջ մտել 1976 թ. մարտի 28-ին:

Քաղաքական իրավունքների և ազատությունների թվում կարելի է դասել նաև մտքի, խղճի, կրոնի ազատությունը (հոդվ. 18), համոզմունքի ազատություն և այն անկաշկանդ արտահայտելու իրավունքը, խաղաղ ժողովների ազատություն, անմիջական կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով երկրի կառավարմանը մասնակցելու իրավունքը:

Եվ, վերջապես, Հոշակագրի 22—28 հոդվածներում թվարկվում են անձի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքին վերաբերող իրավունքները և ազատությունները, այդ թվում՝ աշխատանքի իրավունք և մասնագիտություն ընտրելու ազատություն, հավասար աշխատանքի համար հավասար վարձատրություն, արհմիությունների մեջ միավորվելու, հանգստի և ժամանցի, որոշակի կենսամակարդակի, կրթության իրավունքը և այլն, որոնք կազմում են մարդու իրավունքների երրորդ խումբը:

Նշված իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք կարող է ենթարկվել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով նախատեսվում են բացառապես մյուսների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգումը ապահովելու և ժողովրդավարական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները՝ հասարակության ընդհանուր բարեկեցությունը ապահովելու նպատակով:

Հոշակագիրը ինքնին պետությունների համար չի ստեղծում վարքագծի պարտադիր նորմեր: Այդ իսկ պատճառով ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան հայտարարել է այն որպես բոլոր ժողովուրդների և պետությունների գործունեության կարևոր ուղեցիչ:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետությունների միջև անմիջական հարաբերությունների ստեղծման հարցը ավելի կոնկրետացվեց հոշակագրի հիման վրա ընդունված «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ու «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» դաշնագրերում: Այդ դաշնագրերը ոչ միայն ավելի մանրամասն ու բազմակողմ են կարգավորում Հոշակագրում ամրագրված մարդու իրավունքներն ու ազատությունները, այլև բովանդակում են կոնկրետ հանձնարարականներ միացած պետությունների համար՝ դրանց իրականացման գործում ապահովելու կայուն երաշխիքներ: Այսպես, օրինակ, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» դաշնագրի 2-րդ մասում գետեղված են նորմեր, որոնք պարտավորեցնում են պետություններին, իրենց նւթական ռեսուրսներից ելնելով, առավելագույնս ապահովել դաշնագրով ստանձնած մարդու իրավունքների և ազատությունների իրականացման վերաբերյալ պարտականությունները, իսկ «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» դաշնագրի 2-րդ հոդվածը մասնակից պետություններին ուղղակի պարտավորեցնում է իրենց տարածքներում ապահովել բոլոր անձանց իրավունքները, անկախ ռասայից, մաշկի գույնից, լեզվից, սեռից, կրոնական և ազգային պատկանելությունից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, սոցիալական ու գույքային վիճակից, ծննդավայրից կամ այլ հանգամանքներից:

Հոշակագրի ընդունումից հետո ընկած ժամանակաշրջանում, բացի նշված համաձայնագրերից, Միացյալ Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունվեցին մեծ թվով այլ փաստաթղթեր ևս, որոնց մի մասը ուղղակի, մյուսները՝ անուղղակի, առնչվում են մարդու իրավունքների սահմանման և պաշտպանության խնդրին: Մեր խնդիրը չէ մեկ առ մեկ քննարկել այդ փաստաթղթերի բովանդակությունը: Սակայն մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերի մասին ավարտուն պատկերացում կազմելու համար նպատակահարմար կլինի համատեղ հարաբերություններ կարգավորող փաստաթղթերը դասակարգել առանձին խմբերի մեջ և համոտ կանգ առնել դրանց բովանդակության վրա:

Իրենց նշանակությամբ առաջին խումբն են կազմում այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են **ինքնորոշման իրավունքին**: Այդ հիմնահարցին է նվիրված «Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն տալու մասին» (1960 թ.) հոշակագիրը: Հոշակագրի շնորհիվ կարճ ժամանակամիջոցում Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի քազմաթիվ երկրներ թոթափեցին գաղութային լուծը և բռնեցին ինքնուրույն զարգացման ուղին:

Երկրորդ խումբն են կազմում այն ակտերը, որոնք կոչված են համախմբելու պետությունների ջանքերը՝ մարդու իրավունքների խախտումների դեմ կազմակերպվող պայքարում: Այդ թվում՝ «Ցեղաուպանության հանցագործության նախագոյնացման և դրա պատժի մասին» (1948 թ.), «Բոլոր տեսակի ռասայական խտրականության վերացման մասին» (1968 թ.), «Ապարտեյդի հանցագործությունների կանխման և դրանց պատժի մասին» (1973 թ.), «Զինվորական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար վաղեմության ժամկետ չկիրառելու մասին» (1968 թ.) կոնվենցիաները: Այդ փաստաթղթերը միջազգային իրավական լուրջ սանկցիաներ են նախատեսում այն պետությունների ու ժողովուրդների համար, որոնք ազգային, ռասա-

յական, կրոնական և այլ տարբերությունների պատճառով մարդկանց համար ստեղծում են ապրելու համար անտանելի պայմաններ կամ հասնում նրանց ֆիզիկական ոչնչացման: Նման հանցագործությունները, բնականաբար, չունեն վաղեմության ժամկետ, և հանցագործները ենթակա են պատասխանատվության ցանկացած ժամանակ՝ հայտնաբերման դեպքում:

Երրորդ խումբ ակտերը վերաբերում են պետությունների համագործակցությանը առանձին կատեգորիայի անձանց պաշտպանության հարցերով: Այդ թվում՝ «Կնոջ քաղաքական իրավունքների մասին» (1958 թ.), «Կնոջ նկատմամբ բոլոր տեսակի խտրականությունների վերացման մասին» (1979 թ.) կոնվենցիաները և «Երեխաների իրավունքների մասին» (1958 թ.) հռչակագիրը:

Նշված ակտերում բովանդակվում են նորմեր, որոնք պարտավորեցնում են մասնակից պետություններին իրենց ներպետական օրենսդրությունում արտաբերելու կոնվենցիաներում ամրագրված կնոջ և տղամարդու իրավահավասարության վերաբերյալ դրույթները: Մարդու իրավունքների վերաբերյալ այդ կարևոր փաստաթղթերը հիմք հանդիսացան բազմաթիվ երկրներում մարդկության երկրորդ կեսի նկատմամբ արդարացի, քաղաքակիրթ վերաբերմունքի վերականգնմանը:

Մարդու իրավունքների միջազգային իրավական կարգավորման փաստաթղթերի ինքնուրույն խումբ կարելի է համարել քաղաքացիության խնդիրներին առնչվող փաստաթղթերը: Այդ թվում՝ «Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին» (1957 թ.), «Ապաքաղաքացիության կրճատման մասին» (1961 թ.), «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» (1957 թ.), «Փախստականների կարգավիճակի մասին»⁵ կոնվենցիաները, որոնցում բովանդակված նորմերի՝ մասնակից պետությունների կողմից իրացումը հնարավորություն կընձեռնի ավելի տանելի, բարեկեցիկ դարձնելու մարդու ապրելակերպը, կենցաղը և կյանքն ընդհանրապես:

Որքան էլ մարդկությունը առաջընթաց զարգացում է ապրում, այնուամենայնիվ առայժմ հնարավոր չէ իսպառ բացառել քաղաքակիրթ հասարակության բարոյական կերպարին անհարիր պատերազմներն ու ընդհարումները: Եվ քանի որ պատերազմների գոյությունը մարդկային հասարակությանը հատուկ երևույթ է, ուստի մարդկությունը փորձել է նաև այդ դեպքում միջազգային իրավական ակտերի միջոցով մշակել հանձնարարականներ, որոնց կիրառությունը համեմատաբար տանելի կդարձնի մարդու կյանքը պատերազմական պայմաններում: Ջինված բախումների տարածքում մարդու իրավունքների սահմանմանն ու պաշտպանությանն են նվիրված «Գործող բանակներում վիրավորների ու հիվանդների վիճակի բարելավման մասին», «Ինքնազերհների հետ վարվելակերպի մասին», «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» Ժնևում 1949 թ. ընդունված կոնվենցիաները և «Ոչ միջազգային բնույթի զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ», «Միջազգային ռազմական կոնֆլիկտների զոհերի պաշտպանության մասին» Ժնևում ընդունված կոնվենցիաների կից արձանագրությունները⁶:

Մանրամասն կանգ չառնելով բերված մեծաքանակ միջազգային իրավական փաստաթղթերի բովանդակության վերլուծության վրա՝ հարկ է նկատել, որ Միացյալ Ազգերի Կազմակերպության ու նրա մասնագիտացված մարմինների և մյուս հեղինակավոր միջազգային կազմակերպությունների նպատակամղված գործունեությունն ուղղված է մեկ նվիրական և մարդասիրական նպատակի՝ պաշտպանելու մարդու իրավունքները և ազատությունները ցանկացած իրադրությունում՝ բնական թե արտակարգ:

Միաժամանակ հարկ է նշել, որ միջազգային կազմակերպությունները դեռևս շատ անելիքներ ունեն մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում: Այնպիսի մի կարևոր հիմնահարց, ինչպիսին ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունն է, առայժմ Կոնստանտնուպոլիսի միջազգային կազմակերպության ուշադրությունից: Եթե առաջին համաշխարհային պատերազմից հետո ստեղծված Ազգերի Լիգան ուներ այդ հարցով զբաղվող կառուցվածքային ստորաբաժանում, ապա այն բացակայում է ՄԱԿ-ի կառուցվածքում: Բացի դա, աշտարակային դրությամբ միջպետական հարաբերություններում սահմանված «տարածքային ամբողջականության» սկզբունքը գերակայվում է «ազգերի ինքնորոշման իրավունքի» սկզբունքին, որը մեծ չափով խոչընդոտում է

⁵ Ընդունվել է ՄԱԿ-ի անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչների կոնֆերանսում 1951 թ. հուլիսի 28-ին:

⁶ Տե՛ս «Մարդու իրավունքները և ժողովրդավարությունը (ամերիկյան հեղափոխությունից մինչև մեր օրերը» (կազմողներ՝ Է. Ն. Մամիկոնյան, Հ. Ա. Ասրյան), Երևան, 1984, էջ 249—382:

վերջինիս իրականացմանը: Եթե նկատի ունենանք նաև, որ միջազգային իրավական ասպեկտով դեռևս պարզորոշ սահմանված չէ «պետության տարածք» և «ազգային տարածք» հասկացությունները, ապա պարզ կլինի, թե ինչպիսի անմիօրսար վիճակում է գտնվում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը մարդու իրավունքների պաշտպանության մասին: Մարդու իրավունքների սահմանման և պաշտպանության վերաբերյալ ընդունված միջազգային փաստաթղթերը ոչ մի արժեք չեն ունենա, եթե դրանցում ամրագրված նորմերն ու սկզբունքները իրենց արտացոլումը չստանան մասնակից երկրների ներպետական օրենսդրության մեջ: Չնայած այդ երկրները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել յուրաքանչյուր դեպքում իրենց կողմից ստորագրված միջազգային փաստաթղթին, սակայն գործնականում երբեմն շատ բան կախված է լինում այն բանից, թե տվյալ երկրում պետական իշխանությունը ինչ քաղաքական ռեժիմի պայմաններում է իրականացվում: Այսպես, մեր դարի 80-ական թվականների վերջերին նախկին Խորհրդային Միության տարածքում բռնկված համաժողովրդական շարժումը, որն ընթանում էր մի կողմից՝ ազգերի, ժողովուրդների պետական անկախության նվաճման, մյուս կողմից՝ կառավարման վարչահրամայական ռեժիմի տապալման ու մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ, առաջ քաշեց հրապարակային-քաղաքական իշխանության նորովի իրականացման իր կարգախոսը: Դա իրավական պետության ստեղծման գաղափարն էր: Ի թիվս նախկին Խորհրդային Միության կազմում գտնված հանրապետությունների, Հայաստանի Հանրապետությունը ձեռք է բերել անկախություն, ստեղծել իր պետական նոր կառուցվածքը և ձեռնամուխ եղել իր քաղաքական իշխանության իրականացման ժողովրդավարական ռեժիմի հաստատմանը և քաղաքացիների իրավունքների ու ազատությունների գործնական պաշտպանությանը: Այդ մաստակով, որպես միջազգային իրավունքի նոր սուբյեկտ, Հայաստանի Հանրապետությունը միացել է «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին»⁷, ինչպես նաև «Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների մասին»⁸ դաշնագրերին: Կասկածից վեր է, որ նշված միջազգային իրավական փաստաթղթերի դրույթներն ու սկզբունքները մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ իրենց արտացոլումն են գտել և կշարունակեն գտնել երիտասարդ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ:

Հայաստանի Հանրապետության առաջին կարևորության օրենսդրական ակտը գործող սահմանադրությունն է, որի «Պետությունը և անհատը» բաժինը ամբողջովին նվիրված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և նրա տարածքում ապրող այլ անձանց իրավական վիճակին և հիմնականում շարադրված է միջազգային իրավական փաստաթղթերի նորմերին ու սկզբունքներին համապատասխան: Այսպես, Սահմանադրության 5-րդ գլխում գրված է, որ ՀՀ քաղաքացիները օրենքի առաջ հավասար են, անկախ ծագումից, սոցիալական և գույքային դրությունից, դասայական և ազգային պատկանելությունից, սեռից, կրթությունից, լեզվից, կրոնի նկատմամբ վերաբերմունքից, գրադրությունից տեսակից ու բնույթից, բնակչության վայրից ու այլ հանգամանքներից (հոդվ. 32): Այդ նույն գլխում սահմանվում է նաև Հայաստանի Հանրապետությունում կնոջ և տղամարդու իրավահավասարությունը (հոդվ. 32): Սահմանադրությունը հատուկ գլուխ (6-րդ) է պարունակում քաղաքացիների հիմնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների մասին, որ միջազգային իրավական փաստաթղթերին համապատասխան լայնորեն ճանաչվում են քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները սոցիալ-տնտեսական, քաղաքական և անձնական կյանքին վերաբերող բնագավառներում:

Ներկայումս ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովը, որի կազմում ընդգրկված են հանրապետությունում գրանցված գրեթե բոլոր կուսակցությունների ներկայացուցիչները, մշակում է Գերագույն խորհրդի կողմից հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության նոր սահմանադրության նախագիծը, որտեղ ավելի ծավալուն և համակողմանի է ներկայացվում մարդու իրավունքներն ու ազատությունները:

Մարդու իրավունքների սահմանման և պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերի դրույթներն ու սկզբունքները իրենց լայն արտացոլումն են գտել նաև Հայաստանի Հանրապետության ընթացիկ օրենսդրության մեջ: Այսպես, «Անկախ պետականության հիմնադրույթների մասին»⁹ Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում գրված է. «Հայաստանի Հանրապետությունը, ելնելով մարդու իրավունքների հանընդհանուր հույակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի նոր-

⁷ Ընդունվել է 1991 թ. ապրիլի 4-ին:

⁸ Ընդունվել է 1993 թ. հունվարի 19-ին:

⁹ «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1991, № 18, հոդվ. 402:

մերից, ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից» (հոդվ. 10): Այստեղից երևում է, որ ՀՀ լիովին ճանաչում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և իր ներպետական օրենսդրությունը կառուցում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան: Եվ որպես ինքնիշխան պետության, այդ նույն հոդվածով ՀՀ ստանձնում է իր քաղաքացիների պաշտպանությունն ու նրանց նկատմամբ հոգատարությունը նաև երկրի սահմաններից դուրս:

Ի կատարումն ստանձնած այդ միջազգային-իրավական պարտավորության՝ ՀՀ բարձրագույն օրենսդիր մարմինը, առաջնորդվելով հանրապետության գործող սահմանադրությամբ, ընդունել է մի շարք օրենքներ, որոնք ամբողջությամբ վերաբերում են քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին նրանց կյանքի ամենատարբեր բնագավառներում: Առավել ծավալուն է քաղաքացիների՝ սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ օրենսդրությունը: Այսպես, ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. մարտի 6-ին ընդունեց «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին»¹⁰, իսկ 1993 թ. հունվարի 7-ին՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին»¹¹ օրենքները: Նրանցում բովանդակվում են դրույթներ, որոնք ուղղված են սոցիալապես ցածր պաշտպանվածություն ունեցող անձանց նյութական վիճակի բարելավմանը, որը ցանկացած պետության հիմնական խնդիրն է: Քաղաքացիների կենսապահովման խնդրի լուծման նպատակով է ընդունված նաև «Բնակչության զբաղվածության մասին»¹² օրենքը, որը վերաբերում է միջազգային-իրավական նորմերով սահմանված մարդու սոցիալ-տնտեսական կարևորագույն իրավունքներից մեկին՝ աշխատանքի իրավունքին: Օրենքում սահմանված են մի շարք պետական միջոցառումներ, որոնք արդյունավետ երաշխիքներ են մարդու աշխատանքի իրավունքի կենսագործման հարցում:

Հայաստանի Հանրապետությունը ունի ծավալուն օրենսդրություն՝ քաղաքացիների իրավունքների և ազատությունների վերաբերյալ, որը նույնպես լայնորեն հաշվի է առնում այդ բնագավառի վերաբերյալ ընդունված միջազգային իրավական ակտերի պահանջները: Այսպես, հանրապետությունում գործող Սահմանադրությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար նախատեսում է պետական և հասարակական գործերի կառավարմանը, համապետական և տեղական նշանակության օրենքների և որոշումների քննարկմանն ու ընդունմանը մասնակցելու իրավունք (հոդվ. 48): Իսկ այդ իրավունքն ապահովում է ՀՀ ներկայացուցչական մարմիններ և այլ ընտրովի մարմիններ ընտրելու և դրանցում ընտրվելու, համաժողովրդական քննարկումներին և քվեարկություններին, պետական մարմինների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների աշխատանքներին մասնակցելու հնարավորություն: Դրան համապատասխան ՀՀ Գերագույն խորհուրդը 1990 թ. փետրվարի 13-ին ընդունեց օրենք «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունների մասին» և «Հայաստանի Հանրապետության պատգամավորների տեղական խորհուրդների պատգամավորների ընտրության մասին»: Ըստ այդ օրենքների Հայաստանի Հանրապետությունում ընտրությունները անցկացվում են ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի ազատ իրականացման հիման վրա, գաղտնի քվեարկությամբ: Ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն 18 տարին լրացած ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի, որի ընտրական իրավունքների ուղղակի կամ անուղղակի ամեն մի սահմանափակում անթույլատրելի է և պատժվում է օրենքով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն իրենց քաղաքական ակտիվության զարգացմանը նպաստող կազմակերպությունների մեջ միավորվելու իրավունք ունեն (հոդվ. 25): Այդ իրավունքի իրականացման կարևոր երաշխիք է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1991 թ. փետրվարի 26-ին ընդունված «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը¹³, որով վերջ դրվեց կոմունիստական վարչակարգի կողմից սահմանված միակուսակցական համակարգին: Օրենքը իրավունք է վերապահում հանրապետության ընտրական տարիքի հասած յուրաքանչյուր քաղաքացու կամավոր հիմունքներով միավորվելու և ընտրությունների միջոցով մասնակցելու պետական իշխանության մարմինների կազմավորմանը, դրանց գործունեությանը, ինչպես նաև Պահրա-

¹⁰ «ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1992, № 6, հոդվ. 113:

¹¹ «ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1993, № 1—2, հոդվ. 1:

¹² «ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1991, № 24, հոդվ. 545:

¹³ Տե՛ս «ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1991, № 4, հոդվ. 73:

պետության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին (հոդվ 1):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ներկա պայմաններում ավելի քան ակտիվությամբ են մասնակցում իրենց այդ սահմանադրական իրավունքի իրականացմանը: Ապացույցը՝ հանրապետությունում գրանցված մի քանի տասնյակից ավելի քաղաքական կուսակցությունների գոյությունն է:

Ժողովրդավարական ռեժիմի պետություններին հատուկ է նաև քաղաքացիների համար սահմանված լայն ազատությունները: Հայաստանի Հանրապետությունը այդ կապակցությամբ բացառություն չէ: Գործող սահմանադրությամբ հանրապետության քաղաքացիների համար երաշխավորվում են խոսքի, մամուլի, խղճի, ժողովների, միտիճգների, փողոցային երթերի և ցույցերի ազատություն (հոդվ. 48, 50):

Ի կատարումն սահմանադրությամբ ամրագրված մարդու բնական կացության պահանջների՝ ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. հունիսի 17-ին ընդունեց օրենք «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին»¹⁴: Ըստ այդ օրենքի, յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն է որոշում իր վերաբերմունքը կրոնի նկատմամբ, իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն, անձնապես կամ այլ քաղաքացիների հետ համատեղ կատարելու կրոնական ծեսեր: Դավանանքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների ուղղակի կամ անուղղակի սահմանափակումները, կրոնական հողի վրա հետապնդումները կամ այլ իրավունքների խոչընդոտումը, կրոնական թշնամանքի հարուցումը առաջ են բերում օրենքով սահմանված պատասխանատվություն (հոդվ. 1—2):

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ընդունած մեկ այլ օրենք՝ «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին»¹⁵ օրենքը ի յուր ամենքի արձանագրեց, որ Հայաստանի Հանրապետությունում մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները ազատ են, գրաքննության չեն ենթարկվում: Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ունեն մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներով իրենց տեսակետները, կարծիքները արտահայտելու, հասարակական կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատապ և հավաստի լրատվություն ստանալու իրավունք (հոդվ. 2): Օրենքը արգելում է Հայաստանի Հանրապետությունում մամուլի և զանգվածային լրատվության միջոցների որևէ տեսակի մենաշնորհ:

Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցները, առաջադրվելով հավասարության, մարդասիրության, տարակարծության, հանդուրժողականության, հարգանքի, խղճի ազատության սկզբունքներով և համամարդկային այլ արժեքներով, օժանդակում են հրապարակայնությանն ու ժողովրդավարությանը, մտքի, խոսքի, բազմակարծության ազատությանը:

Հայոց պետականության ամրապնդման և քաղաքացիների իրավունքների պաշտպանության գործում լուրջ ներդրում էր Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1993 թ. ապրիլի 17-ին ընդունած «Լեզվի մասին» օրենքը¹⁶: Ըստ այդ օրենքի, Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները (հոդվ. 1): Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են գործավարությունը կատարել հայերեն, ցուցանակները, ձևաթղթերը, նամականիշները, կրմիքները, միջազգային փոստային ծրարները ձևավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով (հոդվ. 4): Պաշտոնատար անձինք և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են տիրապետել հայերենին (հոդվ. 3):

«Լեզվի մասին օրենքով Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման և դաստիարակության համար սահմանվում է հայերեն լեզուն: Միաժամանակ հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ» (հոդվ. 4):

Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի ազատ զարգացումը ապահովելու հետ միասին օրենքը լայն հնարավորություններ է ընձեռում հայոց պետականության կայացման, նրա միջազգային հեղինակության բարձրացման և հայ մարդու հայեցի դաստիարակության գործում:

Հայաստանի Հանրապետության գործող սահմանադրությամբ ամրագրված են նաև

¹⁴ «ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1991, № 12, հոդվ. 245:

¹⁵ «ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1991, № 18, հոդվ. 420:

¹⁶ «ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1993, № 18, հոդվ. 106:

քաղաքացիների մի շարք անձնական իրավունքներ, որոնց թվում՝ անձի անձեռնմխելիության, բնակարանի անձեռնմխելիության, հեռախոսային խոսակցությունների, մամակագրության և հեռագրական հաղորդումների գաղտնիության իրավունքը (հոդվ. 52—54): Քաղաքացիների անձի հարգումը, նրանց իրավունքների և ազատությունների պահպանումը բոլոր պետական մարմինների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների և պաշտոնատար անձանց պարտականությունն է: Այդ կապակցությամբ Սահմանադրությունը իրավունք է վերապահում քաղաքացիներին դատական կարգով զանգատարկելու պաշտոնատար անձանց, պետական և հասարակական մարմինների գործողությունները (հոդվ. 54—55):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նշված սահմանադրական իրավունքները իրենց ավելի մանրամասն կարգավորումն են ստացել հանրապետության քրեական և քաղաքացիական նյութական և դատավարական իրավունքների նորմերով:

Միջազգային-իրավական նորմերի և սկզբունքների պահանջների հաշվառմամբ բազմակողմանի կարգավորելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները՝ հանրապետության պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմինը հատուկ ուշադրություն է նվիրել ՀՀ քաղաքացիներ չհանդիսացող անձանց իրավական վիճակին: 1994 թ. հունիսի 17-ին ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունեց օրենք «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին»¹⁷: Ըստ այդ օրենքի, «Օտարերկրյա քաղաքացին Հայաստանի Հանրապետությունում օգտվում է միջազգային իրավունքի նորմերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավունքներից» (հոդվ. 2): Այս ձևակերպման բովանդակությունը կոնկրետացված է օրենքի 25-րդ հոդվածում, ուր թվարկված են օտարերկրյա քաղաքացիների իրավունքները, ազատություններն ու պարտականությունները հասարակության կյանքի տարբեր բնագավառներում: Այսպես, օտարերկրյա քաղաքացին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ունի սեփականության¹⁸, աշխատանքի¹⁹ և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Բացի այդ, օտարերկրյա քաղաքացին ունի անձնական և ընտանեկան կյանքին անօրինական միջամտելուց օրենքով պաշտպանվելու, անձի և բնակարանի անձեռնմխելիության, հաղորդակցության գաղտնիության, պատվի և արժանապատվության, կյանքի և առողջության, անձնական ազատության և գույքի դեմ ոտնձգությունից դատական պաշտպանության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն հավասար իրավունքներ: Եթե ավելացնենք, որ նշված հոդվածի համաձայն՝ օտարերկրյա քաղաքացին Հայաստանի Հանրապետությունում իրավունք ունի պահպանելու իր ազգային լեզուն, մշակույթը և սովորույթները, ինչպես նաև ունի մտքի, խղճի և դավանանքի ազատություն, ապա պարզ կդառնա, որ գործող օրենսդրությունը օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց օժտել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված բոլոր իրավունքներով և ազատություններով, բացառությամբ քաղաքական իրավունքների և ազատությունների²⁰:

Հայաստանի Հանրապետությունը օտարերկրյա քաղաքացիների կարգավիճակը սահմանելիս հաշվի է առնում ոչ միայն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ միջազգային իրավական ակտերի պահանջները, այլև միջպետական պայմանագրերով ու համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները: Դրա արտահայտությունն է այն, որ «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» օրենքը զանազանում է օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կացության տարբեր խմբեր (4 խումբ)՝ յուրաքանչյուր խմբի անձանց համար սահմանում համապատասխան իրավական վիճակ²¹:

¹⁷ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 23 հունիսի, 1994 թ.:

¹⁸ Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» օրենքի 5-րդ գլուխը («Հայաստան» օրաթերթ, Ույեմբեր, 1990 թ.):

¹⁹ Տե՛ս «Բնակչության զբաղվածության մասին» օրենքի 2-րդ հոդվածը («ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1991, № 24, հոդվ. 545):

²⁰ Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» օրենքի 25-րդ հոդվածի օտարերկրյա քաղաքացին Հայաստանի Հանրապետությունում չունի ընտանեկան իրավունք, չի կարող անդամագրվել ՀՀ հասարակական-քաղաքական որևէ կազմակերպության, չի կարող ընտրվել կամ նշանակվել այնպիսի պաշտոնների կամ զբաղվել այնպիսի գործունեությամբ, որոնց համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է ունենալ ՀՀ քաղաքացիություն:

²¹ Տե՛ս Օրենքի 27, 28, 29 և 30 հոդվածները:

Ծարադրվածը աներկբա վկայում է, որ Հայաստանի նորանկախ Հանրապետությունը անշեղորեն իրականացնում է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների օրենսդրական կարգավորման կուրս, որը հատուկ է ամեն մի ժողովրդավարական կառավարման ռեժիմի պետության: Սակայն ամենակատարյալ իրավական համակարգը, ուրեմն և՛ այդ համակարգը կազմող օրենսդրական ակտերը լոկ թղթի կտորներ են, եթե դրանք չեն ապահովված կատարման իրական երաշխիքներով կամ գործնական կիրառություն չեն գտնում: Մարդու իրավունքների և ազատությունների ամենակուպիտ ոտնահարման փաստերով ավելի քան հարուստ է ժամանակակից միջազգային կյանքը: Մեր խնդիրը չէ քննարկել, թե Երկիր մոլորակի տարբեր հատվածներում ինչպիսի դաժան ձևերով ու մեթոդներով են ոտնահարվում մարդու ամենատարրական իրավունքները, այդ թվում՝ նրա ապրելու բնական իրավունքը: Սակայն ցավալին այն է, որ այդ արևտից գերծ չէ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը: Առկա տնտեսական օրյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները խոր հետք են թողել պետական իշխանության կազմակերպման և իրացման վրա, որն էլ իր հերթին հանգեցնում է ՀՀ քաղաքացիների և սոցիալ-տնտեսական, և՛ անձնական, և՛ քաղաքական իրավունքների ու ազատությունների ոտնահարման դեպքերի: Մինչդեռ «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածում ուղղակի ասված է, որ Հայաստանի Հանրապետությունը, ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի նորմերից, ապահովում է քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և սեռականացից:

Ազգային օրենսդրության այս հիմնարար նորմի կենսագործումը կարևոր նշանակություն ունի ժողովրդավարական կարգ ունեցող պետության համար, հակառակ դեպքում՝ նա չի կարող այդ նույնը պահանջել այլ պետություններից, առավել ևս՝ միջազգային հանրությունից:

В. Н. АЙВАЗЯН— Трансформация международных норм по защите прав человека в национальном законодательстве РА.— Установление и защита прав человека является краеугольным камнем развития современного общества. Эту задачу мировая общественность решает посредством таких межгосударственных организаций, как ООН, СБСЕ, ЕС, ЕП, СНГ и др. Правовую основу защиты прав человека составляют акты этих организаций. Последние обязательны для государств, подписывающих их. Республика Армения является участником многих международных актов по правам человека. Это привело к тому, что часть норм этих актов трансформировалась в национальное законодательство. Эти нормы приобретают реальные очертания в результате неукоснительной их реализации государством. В статье подробно анализируются причины необеспечения Республикой Армения в наши дни отдельных норм законодательства по правам человека и указываются пути преодоления кризиса в этой области.